թերցողացդ հանդիպեալ իցէ աչօք տեսութեամբ և ականջօք լսեցեալ, և ես փոքրիկն 'ի ձէնջ ընթերցայ լուայ և տեսի յոյժ, զի իշխան ինքնակալ և դատաւոր ինքնակամ 'ի վերայ հնազանդեցելոց իւրոց միշտ ահարկու և սարսափելի եղև, և ժողովուրդք նոցայ կատարելոյ կամս և հրամանս նորայ 'ի պատճառն երկիւղի իւրեանց. այսպիսի իշխանք բազումք եթէ նախնում և եթէ այժմոյս մէջ Քրիստոնէից և եթէ մէջ հեթանոսաց ճաշակեցին մահ դառնութեան, ոմանք դեղակուր, ոմանք յեղձուցեալ մէջ քնոյ, ոմանք սրով խորովեալ 'ի դաշտի յորսի, ոմանք իսկոյն ձեռնամուխ լեալ 'ի անարժան յառնէ, այս ամենայն եղև և լինիլ կարէ պատճառն կատարելոյ կամն միմիայն միայնոյ ինքնակալի ընդ դէմ կամաց հասարակ ժողովրդոց, և իշխանութիւնն յիշխանիս 'ի վերայ ժողովրդեանց յորում լռեն և հնազանդեն նմայ, և ընդունի արարս նորա ոչ ըստ կամօք իւրեանց և ոչ ըստ սահմանի Օրինօք բայց 'ի յերկիւղէ, և որպէս սահմանէ աշխարհիս և բնութիւն մարդւոյ զի զոր ինչ երկիւղ քաջութիւն սէր և հակառակութիւն և ամենայն զոր ինչ որ դատանի 'ի ներքոյ արեգական և 'ի յերեսս երկրի՝ մի՛ մնասցէ յաւիտեան եթէ ոչ միշտ թուլասցի և անկանիցի, նա՛ և կրկին ծնանի ըստ սովորութեան տարբերութեան աշխարհիս և բնութեանս մերոյ, նոյն դու-